Իմ կյանքի գլխավոր քննությունը



Արայիկ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող, Արցախի ինքնապաշտպանության ուժերի 6-րդ վաշտի մարտիկ

Բոլոր ժամանակներում էլ հավատարմությունը հայրենի հողին հաստատվել է կոնկրետ գործերով: Ղարաբաղյան շարժման ճակատագրական փուլում հասավ նաև իմ սերնդի աստեղային ժամը: Հայրենիքիս լինել-չլինելու հարցն էր որոշվում: Անցյալ տարվա դեկտեմբերին ժամկետից շուտ հանձնեցի բոլոր քննություններս ու վերադարձա Ստեփանակերտ: Չէի կարող չվերադառնալ. այնտեղ են ծնողներս, եղբայրներըս, հորեղբայրներս: Այնտեղ է մանկությունս...

1991 թ. վերջերին, ԼՂՀ-ում ֆիդայական խմբերի բազայի վրա սկսել էին կազմավորվել ինքնապաշտպանության կանոնավոր ջոկատները: Ինձ ընդգրկեցին 6-րդ վաշտում:

Առաջին մարտական մկրտությունս ստացա Կըրկժանում, որտեղ դեռևս մարտեր էին գնում: Ադրբեջանցիների կողմից շատ ուժեղ ամրացված և Շուշվա հետ սերտ կապեր ունեցող Կրկժանի ադրբեջանական մասը պետք է գրավվեր: Այդպես էլ եղավ: Այնտեղից սկսվեցին մեր ռազմական հաջողությունները: Անփորձիս համար սկզբում դժվար էր: Բայց իմ թիկունքին սարի պես կանգնած տղաներ կային, որոնց ներկայությունն իսկ սրտապնդում էր: Ես ինձ զինվոր զգացի ու հող հայրենիի պաշտպան: Դա մի ուրիշ կոչում է, մինչ այդ անծանոթ մի կատաղի զգացում, որ հիմա պարուրել է ողջ էությունս, կանխորոշելով իմ յուրաքանչյուր քայլն ու արարքը:

Խոջալու. դա մի սովորական գյուղ չէր, այլ ադըրբեջանական զորքերի, օմօնի համար խոշոր ռազմական բազա՝ Ստեփանակերտի քթի տակ: Խոջալուն զավթել էր օդակայանը և փակել Արցախն աշխարհին կապող միակ ուղին: Լեռնաշխարհն արդեն շնչահեղձ էր լինում: Փետրվարի 25-ին հարձակումն սկսվեց մի քանի ուղղություններով: Հրետանային նախապատրաստությունից հետո գրոհի անցավ հետևակը: Մեր վաշտը դեպի Խոջալու շարժվեց Մեհտիշենի կողմից: Չորս-հինգ ժամ հետո թշնամու որջը, որ նախկին հայկական բնակավայր էր, հիմնականում գրավված էր: Հակառակորդը այնպես էլ ուշքի չեկավ ու խուճապահար փախավ: Չեմ ուզում կրկնել աղմուկ հանած հայտնի փաստերը: Ադրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավարները Խոջալուի խաղաքարտով կեղտոտ խաղեր խաղացին իրենց իսկ ժողովրդի գլխին՝ ինչ-ինչ քաղաքական նկատառումներով: Սակայն այդ ժողովուրդը զարմանալի կուրությամբ շարունակում է հավատալ ժողովըրդական կոչվող արկածախնդիրներին: Դա, հավանաբար, պատմության անողոք կամքն է: Ադրբեջանը՝ հայոց և ուրիշների պատմական հողերից կցմցված այդ հավաքովի կարկատան մինի-կայսրությունը դատապարտված է տրոհման: Թերևս այդ դեպքում Անդրկովկասն ու աշխարհը թեթևացած շունչ քաշեն...

Ասկերանի մատույցներում մղված դաժան մարտերից հետո կշեռքի նժարները կամաց-կամաց հավասարվեցին, սկսեցինք թելադրել մեր կամքը: Յուրաքանչյուր մարտում մերոնք զենք ու զինամթերք էին խլում թշնամուց: 1991 թ. գարնան-ամռան ամիսներին խորհրդային բանակի ուժերով Հադրութում, Բերդաձորում հեշտ հաջողություններից արբած ադրբեջանցիները, զարնվելով կենաց-մահու կռվի ելած ղարաբաղցիների ժայռացած կամքին, սկսեցին ընկրկել, թուլանալ, բարոյալքվել: Եվ դա բնական է. այդ զինվոր կոչվող ասկյարներից ո՞րն է Ղարաբաղի հողում պաշտպանում իր հայրենի տան շեմը, պապի անճյունը, իր հորըն ու մորը, քույրերի պատիվը: Ոչ ոք: Այդ զավթիչների համար Արցախը թշնամական երկիր է: Մեր հողը այրվում է թշնամու ոտքի տակ: Եվ ազատագրության հրեղեն բոցերը հասան մինչև Շուշի:

Անառիկ Շուշին Արցախի սիրտը խրված դանակ էր դարձել: Որդին էլ ծնողին այդպես հարվածի՞... Մեղա քեզ, աստված, այդպիսի որդին կամ պիտի սպանվեր, կամ դարձի բերվեր: Ինչ խոսք, քաղաք-ամրոցի գրավման տակտիկական պլանը փայլուն էր: Իր ավանդը բերեց նաև մեր վաշտը: Մենք քաղաքին մոտեցանք անտառի կողմից և մայիսի 8-ի վաղ առավոտյան աննկատ հասանք թշնամու այն դիրքերին, որտեղից ամիսներ շարունակ հրետակոծվում էին Ստեփանակերտն ու Շոշ գյուղը: Անակնկալ հարձակումով խլեցինք հակառակորդի երեք թնդանոթները: Տեղանքը բաց էր, և ամբողջ օրը գնդակոծության տակ էինք: Թուրքերը մի քանի հուսահատ փորձ արին ետ գրավել կորցրած կարևոր դիրքը: Թշնամական մի տանկ սուրաց մեզ վրա: Ահավոր պահ էր: Բոլորս պատրաստ էինք կյանքի գնով պահել մեր գրաված դիրքը: Ու հենց այդ պահին երկաթյա հրեշի դեմ առյուծի պես ոստնեց վաշտի հրամանատարի տեղակալ Սերգեյ Թովմասյանը՝ հակատանկային նռնակը ձեռքին: Երբեք չեմ մոռանա այդ պահը: Տանկը վնասազերծվեց, իսկ Սերգեյը վիրավորվեց պայթած նռնակի բեկորներից:

Իսկ մինչ այդ Շուշին օղակի մեջ առնվեց: Մայիսի 9-ին, առավոտյան ժամը չորսին սկսվեց քաղաքի անկասելի գրոհը: Ադրբեջանցիները գլխակորույս փախան՝ թողնելով մեծ թվով սպանվածներ, զինամթերք:

Հայոց Շուշին ազատագրվեց: Մեր ցնծությունը սահման չուներ: Բայց, ավա՜ղ, զոհեր էլ տվինք: Հենց միայն մեր վաշտից Շուշվա մարտերում քաջի մահով ընկան Գարիկ Մայիլյանը, Շահեն Սարգսյանը, Կամո Ավագյանը, 18-ամյա Դավիթը, որ իմ հասակակիցն էր... Բոլորն էլ Ստեփանակերտից էին:

Իսկ կռիվները շարունակվում էին: Բախտ ունեցա մասնակցելու նաև Լիսագորի ազատագրմանը և Լաչինով կյանքի ճանապարհի բացմանը դեպի մայր Հայաստան: Եվ գիտե՞ք, մարտադադարների կարճ պահերին, որքան էլ ժամանակը քիչ էր, մտածում էի նաև այն երիտասարդ հայրենակիցներիս մասին, որոնք այսօր էլ շարունակում են թրևել Երևանի փողոցներում: Եթե մահացու վտանգի ժամին այդ տղաները չեն հասնում հայրենիքի հարային, ապա խաղաղ օրերին հայրենիքն առանց նրանց էլ յոլա կգնա: Հետո, երբ հովեկների պես Արցախ գան, չե՞ն ամաչելու մանկության վիրավոր կածաններից...

Երբ Լաչինով ճանապարհ բացվեց դեպի Գորիս, մեր վաշտի հրամանատարությանը խնդրեցի ու մի քանի օրով եկա Երևան՝ ուսանողական հոգսերս հոգալու: Թող ների դասախոսներս, այս անգամ դժվար թե կարողանում, ինչպես միշտ, գերազանց գնահատականներով հանձնել սեսիոն քննությունները: Իմ կյանքի գլխավոր քննությունը ես հիմա այնտեղ եմ հանձնում, մարտնչող Արցախում: Եվ քննողները իմ հայրենի խստաշունչ լեռներն են: Իսկ երբ խաղաղություն իջնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողին, ես կրկին կդառնամ նույն իմաստասեր ուսանողը: